

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԵՅ Բ-ԻՆ

Մոսկվա

Զերդ Սրբություն,

Հոգեկան մեծ գոհունակությամբ կարդացինք Զեր 24 փետրվար 1994 թվակիր նամակը, որով մի անգամ ևս անդրադառնում եք ղարաբաղյան ցավոտ խնդրին, որ վերջին չորս-հինգ տարիներին այնքան զոհեր է խլում թե՛ հայ և թե՛ ադրբեջանցի հարևան ժողովուրդներից: Ղարաբաղյան հակամարտությունը մեր ժամանակների ամենաածանր ողբերգություններից մեկն է հանդիսանում:

Մենք ջերմապես գնահատում ենք Զեր բարի զգացումները՝ մի արդար ու խաղաղ լուծում գտնելու ղարաբաղյան ողբերգության, ինչ որ նաև Մեր ամենօրյա աղոթքն է ու երազանքը:

Եղբայրական սիրով ընդառաջում ենք Զեր առաջարկին և այս օրերին իսկ պիտի հղենք Մեր դիմումները հակամարտող կողմերին՝ կո՛չ անելով նրանց, որ ամեն ճիգ ի գործ դնեն նախ դադարեցնելու համար ամեն տեսակի ռազմական գործողություններ և պատրաստելու բարենպաստ պայմաններ, կողմերի միջև բանակցություններ սկսելու, գտնելու համար ցանկալի լուծումը ղարաբաղյան հակամարտության՝ հիմնվելով ազգությունների ազատ ինքնորոշման՝ միջազգայնորեն հռչակված սկզբունքի վրա:

Մեր խնդրանքն է, որ նաև Զերդ Սրբությունը իր աղոթքներով նպաստի խաղաղության և համերաշխության հաստատմանը Անդրկովկասում: Մենք նաև մեծապես շնորհակալ պիտի լինենք, եթե Զերդ Սրբությունը հարմար գտնի միջնորդել Ռուսաստանի

Ֆեդերացիայի նախագահ Մեծահարգ Տիար Բորիս Ելցինի մոտ, խնդրանքով, որ նա բարեհաճի իր բարձր հեղինակությամբ նպաստել ղարաբաղյան հարցի խաղաղ ու արդար լուծման:

Այս առթիվ Ձերդ Սրբությանը ներկայացնում ենք Մեր ջերմագին շնորհավորանքը Ձեր 65-ամյա տարեբարձի առթիվ՝ մաղթելով, որ Տերը Ձեզ մնա միշտ պահապան և զորավիգ Ձեր հովվապետական առաքելության ճանապարհին՝ ի ծաղկումն Ռուս Պրավոսլավ պատմական մեծ Եկեղեցու:

Եղբայրական սիրո ողջունիվ ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 մարտի 1994 թ.